2025

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2026թ. ապրիլի 3-ի թիվ 2 - Լ որոշման

WWW.ANQA.AM

Բովանդակություն

Նախաբան 3

ՈԱԱԿ 2021–2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքներն ու ազդեցությունը բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում 4

ՈԱԱԿ 2025թ. գործունեության արդյունքները 11

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում 18

Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում 39

Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն 45

Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում 62

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում 68

Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները 79

Զարգացման մարտահրավերներ և առաջիկա ուղղություններ 83

Շարունակելով խթանել միջազգայնացումը և ՀՀ-ում շնորհվող որակավորումների ճանաչելիությունը



Մեր առաքելությունն է

խթանել որակի շարունակական բարելավումը մասնագիտական կրթական համակարգում՝ նպաստելով ինքնավարությանը և հաշվետվողականությանը:



Մեր արժեքներն են.

- ✓ **Վստահությունը,**
- ✓ **Նորարարությունը,**
- ✓ **Հավասարությունը,**
- ✓ **Հաշվետվողականությունը,**
- ✓ **Փոխգործակցությունը:**

ՈԱԱԿ 2021–2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքներն ու ազդեցությունը բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում

2021–2025 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքում ՈԱԱԿ-ը հանդիսացել է բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման վստահելի, համակարգային դերակատարում ունեցող և միջազգային մակարդակում ճանաչելի կառույց: Ռազմավարության արդյունքներն արտահայտվել են ոչ միայն իրականացված գործընթացների ծավալի աճով, այլև կրթական համակարգում որակի ապահովման մշակույթի զարգացմամբ, հաստատությունների պատասխանատվության և հաշվետվողականության ամրապնդմամբ, փորձագիտական ներուժի զարգացմամբ, շահակիցների մասնակցության ակտիվացմամբ և ՀՀ որակի ապահովման համակարգի միջազգային տեսանելիության ու վստահելիության բարձրացմամբ:

Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքներն առավել համակարգված կերպով ներկայացվում են ըստ ռազմավարական նպատակների, որոնց իրագործումն ապահովել է որակի ապահովման համակարգի բազմակողմ զարգացումը՝ ազգային և միջազգային մակարդակներում:

ՈԱԱԿ 2021–2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքներն ու ազդեցությունը բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում

Հավատարմագրման համակարգի նկատմամբ վստահելիության աճ

- Հավատարմագրման համակարգի նկատմամբ վստահելիությունը զգալիորեն աճել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ պետական բոլոր բուհերը և խոշոր ոչ պետական բուհերի մեծ մասը բազմակի անգամ անցել են ինստիտուցիոնալ հավատարմագրում: Ապահովվել է գործընթացների շարունակական զարգացում, ընդլայնվել է ընդգրկվածությունը և կատարելագործվել են մշտադիտարկման մեխանիզմները:
- Արդյունքում ձևավորվել է հավատարմագրման նկատմամբ կայուն ինստիտուցիոնալ վստահություն, իսկ այն բուհերում ընկալվում է ոչ միայն որպես գնահատման, այլև զարգացման և ինքնակառավարման կարևոր գործիք՝ նպաստելով ուսուցման որակի նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը:

Կրթական ծրագրերի զարգացման և վերջնարդյունահենք կրթության ամրապնդում

- Կրթական ծրագրերի զարգացման ոլորտում նկատվում է առաջընթաց՝ պայմանավորված կրթական ծրագրերի աուդիտների ներդրմամբ, ինքնավերլուծության գործիքների զարգացմամբ և ծրագրերի նախագծման ժամանակակից մոտեցումների կիրառմամբ:
- Արդյունքում բուհերում տարածվել է կառուցողական համահնչեցման պրակտիկան, զարգացել են ծրագրերի քարտեզագրման և վերլուծության կարողությունները, ինչպես նաև ամրապնդվել են որակավորումների արժանահավատ շնորհման և հավաստման մեխանիզմները:



ՈԱԱԿ 2021–2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքներն ու ազդեցությունը բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում

Ուսուցման և ուսանողների գնահատման որակի շեշտադրում

- Ուսուցման և ուսանողների գնահատման ոլորտում իրականացված փոփոխությունների արդյունքում վերանայվել են ուսուցման և ուսանողների գնահատման մոտեցումները հավատարմագրման շրջանակներում:
- Արդյունքում որակի ապահովումը տեղափոխվել է դեպի լսարանային և իրական ուսուցման գործընթացներ, ինչի շնորհիվ բարձրացել է ուսուցման գործընթացների թափանցիկությունը:

ՄԿՈՒ հաստատություններում որակի մշակույթի ձևավորում

- ՄԿՈՒ հաստատությունների ներգրավվածությունը հավատարմագրման գործընթացներում էականորեն ընդլայնվել է՝ ընդգրկելով ոչ միայն պետական, այլ նաև ոչ պետական հաստատություններ: Մեկնարկել են երկրորդ շրջափուլով ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացները և պետական ֆինանսավորման աջակցությամբ՝ ծրագրային հավատարմագրման գործընթացներ: Ակտիվացել են նաև կարողությունների զարգացման նախաձեռնությունները ՄԿՈՒ ոլորտում:
- Հավատարմագրումը ՄԿՈՒ համակարգում դարձել է զարգացման գործիք, և ոչ պետական հաստատությունների ներգրավվածությունը վկայում է հավատարմագրման նկատմամբ աճող վստահության և պահանջարկի մասին: Հավատարմագրման երկրորդ շրջափուլում գտնվող հաստատություններում արձանագրվում են կոնկրետ առաջընթաց և բարելավումներ, ինչը փաստում է հավատարմագրման իրական ազդեցության մասին համակարգի վրա: Ծրագրային հավատարմագրումների մեկնարկը նպաստել է կրթական ծրագրերի թիրախավորված բարելավմանը, իսկ դրա ազդեցությամբ բարելավվել են կրթական ծրագրերի նախագծման և իրականացման գործընթացները, կառավարման մոտեցումները և որակի ներքին ապահովման համակարգերը: Աճել է նաև ՊԻԳԲ շրջափուլի կիրառման պրակտիկան:

ՈԱԱԿ 2021–2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքներն ու ազդեցությունը բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում

Միջազգային համագործակցություն և համատեղ հավատարմագրումներ

- Միջազգային համագործակցության շրջանակում մշակվել և փորձարկվել են համատեղ և կրկնակի հավատարմագրումների մոդելներ՝ միջազգային գործընկերների հետ: Ապահովվել է ENQA անդամակցությունը և EQAR-ում ընդգրկվածությունը, իսկ Բոլոնիայի գործընթացի թեմատիկ աշխատանքային խմբերում ակտիվ ներգրավվածություն՝ ներառյալ համանախագահություն: Մասնակցություն է ապահովվել միջազգային ծրագրերում՝ որպես փորձառություն փոխանցող և քաղաքականություն ձևավորող կողմ, իսկ ETF-ի հետ համագործակցությունը խորացել է գործիքների համատեղ մշակման և կիրառման միջոցով:
- ՈԱԱԿ-ը դիրքավորվել է որպես միջազգային ՈԱ քաղաքականությունների համաձևավորող և կարևոր դերակատար: Համատեղ հավատարմագրումները դարձել են ոչ միայն արտաքին գնահատման, այլ նաև միջազգային չափանիշների տեղայնացման ու համակարգի արդիականացման գործիք: ՈԱԱԿ-ը բուհերին ուղղորդում է դեպի միջազգային մոտեցումների կիրառման և համադրելիության ապահովում: ETF-ի հետ համագործակցությունը վերափոխվել է ռազմավարական գործընկերության՝ ներառելով գործիքների փորձարկում և համատեղ մշակում, փորձի փոխանակում և միջազգային փորձի տեղայնացում ազգային համակարգում:



ՈԱԱԿ 2021–2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքներն ու ազդեցությունը բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում

Պետական քաղաքականության ձևավորման և ազդեցության ուժեղացում

- Շարունակվել է ակտիվ համագործակցությունը ոլորտի քաղաքականությունը մշակող պետական մարմինների հետ: Մասնակցություն է ապահովվել կրթության ոլորտի օրենսդրական փոփոխությունների քննարկումներին, և ներկայացվել են մասնագիտական դիտարկումներ և առաջարկություններ մշակված օրենսդրական փաստաթղթերի և քաղաքականությունների վերաբերյալ:
- ՈԱԱԿ-ը շարունակել է լինել որակի ապահովման ոլորտի քաղաքականությունների ձևավորման ակտիվ մասնակից: Որակի ապահովման սկզբունքները ինտեգրվել են պետական կարգավորումներում, ամրապնդվել են նաև համակարգի զարգացման ինստիտուցիոնալ և իրավական հիմքերը:

ՈԱԱԿ 2021–2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքներն ու ազդեցությունը բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում

Փորձագիտական և կազմակերպության կարողությունների զարգացում

- Իրականացվել են շարունակական վերապատրաստումներ փորձագետների համար, իսկ աշխատակազմի մասնագիտական կարողությունները զարգացել են: Կազմակերպության աշխատակազմում ներգրավվել են «Կրթության կառավարում» ծրագրի շրջանավարտներ, իսկ աշխատակազմը ակտիվորեն մասնակցել է դասավանդման և գիտելիքի փոխանցման գործընթացներին:
- Շարունակվել են փորձագիտական և մասնագիտական համայնքի ձևավորման աշխատանքները, իսկ փորձագետները դարձել են որակի մշակույթի տարածողներ իրենց հաստատություններում: ՈԱԱԿ-ում ամրապնդվել է սովորող կազմակերպության մոդելը, ապահովվել է գիտելիքի շարունակական փոխանցում և կուտակում համակարգում:

Որակի մշակույթի ձևավորում համակարգում

- Աճել է շահակիցների՝ մասնավորապես դասախոսների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում, իսկ մասնագիտական երկխոսության հարթակները զարգացել են:
- Որակի ապահովումը դարձել է շարունակական բարելավման գործընթաց, ձևավորվել են ինքնավերլուծության և բարելավման կայուն պրակտիկաներ, և աճել է հաստատությունների գիտակցված մասնակցությունը ՈԱ գործընթացներին:



ՈԱԱԿ 2021–2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքներն ու ազդեցությունը բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում

Հիմք ընդունելով, որ բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգը ներկայումս գտնվում է վերափոխման փուլում, և «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ առաջանում է համակարգի կառուցվածքային և բովանդակային վերանայման անհրաժեշտություն՝ 2026 թվականին ՈԱԱԿ-ը կշարունակի իր առաքելության իրականացումը՝ խթանելով բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգի որակի շարունակական բարելավումը, նպաստելով բուհերի և ՄԿՈւ հաստատությունների ինքնավարությանը և հաշվետվողականությանը պետության և հասարակության առջև:

Միաժամանակ, ՈԱԱԿ ռազմավարական ուղղությունները կպահպանվեն որպես անցումային շրջանի հիմնական ուղենիշներ՝ ապահովելով որակի ապահովման համակարգի շարունակական զարգացումը և ձևավորված արդյունահենք մոտեցումների համադրումը նոր կարգավորումների հետ:

ՈԱԱԿ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄՆԵՐ

ԲՈՒՀԵՐ

2 ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց

5 ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշում

3 կրթական ծրագրի հավատարմագրմագրում

3 կրթական ծրագրի հավատարմագրման որոշում

համատեղ կրկնակի հավատարմագրում՝ AQAS գործակալության հետ

ՄԿՈՒ հաստատություններ

19 ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց

28 ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշում

5 կրթական ծրագրի հավատարմագրմագրում

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

10 ինստիտուցիոնալ և ծրագրային մշտադիտարկում բարձրագույն ուսումնական հաստատություններում

15 մշտադիտարկում ՄԿՈՒ հաստատություններում

ՈԱԱԿ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փորձագիտական կարողությունների ձևավորում

Հավատարմագրումներին մասնակցել են.

11 փորձագետ բարձրագույն կրթության ոլորտում

61 փորձագետ ՄԿՈՒ ոլորտում

Փորձագիտական բազան համալրվել է.

61 նոր փորձագետներով

Ուսանող-փորձագետների բազան համալրվել է.

55 նոր ուսանող-փորձագետներով

5 **Ուսանող ներգրավվել է Եվրոպական ուսանողական միության որակի ապահովման փորձագիտական բազայում**




ՈԱԱԿ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Որակի մշակույթի զարգացում ՀՀ-ում

- իրականացվել են **7** վերապատրաստում փորձագետների, ուսանողների և հաստատությունների ներկայացուցիչների համար
- կազմակերպվել են ինքնավերլուծության և քարտեզագրման վերապատրաստումներ՝ ՄԿՈՒ հաստատությունների մասնակցությամբ
- մեկնարկել է «Կրթական ծրագրերի ներքին աուդիտ» նախագիծը **25** բուհի ~ **120** ներկայացուցիչների ներգրավմամբ

Շահակիցների ներգրավվածություն

- **29** աշխատաժողով Հայաստանում և արտերկրում
- **17** շահակիցների հանդիպում
- **12** համաժողով (**3** միջազգային, **9** տեղական)
- **4** աշխատաժողով՝ ՄԿԾ բարելավման փորձի ներկայացմամբ
- **5** աշխատաժողով՝ ՄԿԾ ներքին աուդիտի թեմայով
- ոլորտային աշխատաժողովներ՝
  - **8** բուհի ~**310** մասնակից
- ՄԿՈՒ վերապատրաստումներ՝
  - **20** հաստատությունից ~**120** մասնակից



ՈԱԱԿ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Միջազգայնացում

ՈԱԱԿ-ը շարունակում է անդամակցել.

- ✓ **ENQA**
- ✓ **INQAAHE**
- ✓ **CEENQA**

Գրանցված է՝

- ✓ **EQAR**

2025 թ.-ին

- ✓ անդամակցել է Ակադեմիական ազնվության համաշխարհային ցանցին **(GAIN)**

Միջազգային գործունեություն և ծրագրեր

- ✓ ներգրավվածություն՝ **7** Erasmus+ ծրագրերում

(T-GREEN, Micro-GEAR, KPI4HE, DeSIRe, eCAMPUS, QA4VET, SIQA)

- ✓ մասնակցություն միջազգային համաժողովների՝
  - **ENQA** Գլխավոր վեհաժողով և մասնակիցների ժողով
  - **INQAAHE** համաժողով
  - **CEENQA** մասնակիցների ժողովներ և վեբինարներ
  - **GAIN** ցանցի անդամների հանդիպումներ
  - Բոլոնիայի հետամուտ խմբերի հանդիպումներ և համաժողովներ

ՈԱԱԿ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Լուսաբանում և հանրայնացում

- ✓ հրապարակվել է **180** լուր պաշտոնական կայքում
- ✓ իրականացվել է՝
  - **27** փորձագիտական այցի լուսաբանում
  - **36** հավատարմագրման որոշման հրապարակում

Կայք

- ✓ **33,000** օգտատեր
- ✓ **74,000** էջադիտում
- ✓ **151,000** գործողություն

Facebook

- ✓ **273** հրապարակում
- ✓ **7,065** հետևորդ

LinkedIn

- ✓ **13** հրապարակում
- ✓ **614** հետևորդ

ՋԼՄ

- ✓ **13** լուսաբանում

ՈԱԱԿ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՈԱԱԿ-ի կողմից Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային **(ENQA)** լիիրավ անդամակցության պահպանումը և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում **(EQAR)** գրանցված լինելու շարունակականությունը վկայում են կազմակերպության գործունեության համապատասխանությունը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման չափորոշիչներին և ուղենիշներին **(ESG)** և ամրապնդում են Հայաստանի որակի ապահովման համակարգի միջազգային վստահելիությունն ու ճանաչելիությունը:


Հավատարմագրման պետական գրանցամատյանը կապակցված է Արտաքին գնահատման զեկույցների եվրոպական շտեմարանին **(DEQAR)**՝ ապահովելով հավատարմագրման արդյունքների ավտոմատ հրապարակում և հասանելիություն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում:

ՈԱԱԿ-ի արտաքին գնահատման զեկույցների հրապարակումը DEQAR-ում նպաստում է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի թափանցիկության բարձրացմանը և ամրապնդում հայաստանյան բուհերի կողմից շնորհվող որակավորումների միջազգային ճանաչելիությունը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում:

ՈԱԱԿ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՈԱԱԿ-ի ակտիվ ներգրավվածությունը Բոլոնիայի գործընթացի խորհրդատվական խմբի **(BFUG)** թեմատիկ խմբերում և Հայաստանի՝ Որակի ապահովման թեմատիկ ուղղության համանախագահող երկրի կարգավիճակը (Ռումինիայի և Ֆրանսիայի հետ համատեղ) էապես բարձրացրել են ՀՀ դերը եվրոպական կրթական քաղաքականության ձևավորման գործընթացներում՝ ապահովելով ազգային համակարգի համադրելիությունը եվրոպական զարգացումների հետ:

Եվրոպական կրթական հիմնադրամի **(ETF)** հետ համագործակցությունը վերածվել է ՄԿՈՒ համակարգի զարգացման ռազմավարական հենասյան՝ հնարավորություն տալով իրականացնել ոլորտի համակարգային ախտորոշում, ձևավորել տվյալահենք քաղաքականության հիմքեր և ներդնել միջազգային լավագույն փորձին համահունչ լուծումներ:



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Հաջողության չափանիշ՝ ՈԱԱԿ-ի իրականացրած գործընթացները/ մատուցած ծառայությունները ճանաչվում են որպես վստահելի աղբյուր և հանդիսանում են ուղեցույց մասնագիտական կրթություն տրամադրողների համար որակի շարունակական մշակույթի խրախուսման և ամրապնդման համար:

Փաստեր

Բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում

2025 թվականին ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ է իրականացրել հետևյալ բարձրագույն ուսումնական հաստատություններում.

- Գորիսի պետական համալսարան (3-րդ շրջափուլ),
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (3-րդ շրջափուլ):

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հավատարմագրումն իրականացվել է Գերմանիայի **AQAS** գործակալության հետ համատեղ:

Սա ՈԱԱԿ-ի կողմից երկրորդ փորձն է նման համատեղ գործընթացի իրականացման:

Գործընթացի շրջանակում համադրվել են երկու գործակալությունների չափանիշները, որոնք երկուսն էլ համահունչ են Եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին **(ESG),** ապահովելով գնահատման միասնական և համադրելի մոտեցում:

Այս փորձը ցույց է տալիս, որ վստահությունը ձևավորվում է համագործակցության, թափանցիկության և մասնագիտական փոխգնահատման արդյունքում:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Համատեղ կրկնակի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացի շրջանակում գնահատվել են նաև երեք կրթական ծրագրեր.

- Տնտեսագիտություն,
- Ֆինանսներ (Ըստ ոլորտների),
- Կառավարում (Ըստ ոլորտների):

Փորձագետների ներգրավում հավատարմագրման գործընթացներում

Հաշվետու տարում միջազգային փորձագետներ են ներգրավվել հետևյալ հաստատություններից.

- Գերմանիայի Լայբնիցի Հանովերի համալսարան,
- Լատվիայի Բիզնեսի և ֆինանսների բալթյան դպրոց,
- Լատվիայի բարձրագույն կրթության լիցենզավորման և հավատարմագրման հանձնաժողով,
- Գերմանիայի Բրեմենի համալսարան,
- Վարշավայի համալսարան:

Տեղացի և ուսանող փորձագետներ ներգրավվել են ՀՀ մի շարք բուհերից և հաստատություններից, մասնավորապես.

- Երևանի պետական համալսարան,
- Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,
- Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան,
- Հայաստանում ֆրանսիական համալսարան,
- Հայաստանի եվրոպական համալսարան,
- «Գրանթ Թորնթոն Հայաստան» ընկերություն:



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Որոշումների կայացում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կայացրել է հետևյալ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները.

- **ՆԳՆ կրթահամալիր**՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**
- **Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան**՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**
- **Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան**՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**
- **Հայկական բժշկական ինստիտուտ**՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**
- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան**՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 տարի ժամկետով: **6**



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի** ծրագրային հավատարմագրման հետևյալ որոշումները.

- **Տնտեսագիտություն՝** ծրագրային հավատարմագրում 5 տարի ժամկետով, **5**
- **Ֆինանսներ(Ըստ ոլորտների)՝** ծրագրային հավատարմագրում 5 տարի ժամկետով, **5**
- **Կառավարում(Ըստ ոլորտների)՝** ծրագրային հավատարմագրում 5 տարի ժամկետով: **5**

Ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումների կայացման շեշտադրումների վերանայում

Քննարկումների արդյունքում բուհերի համար առաջնահերթ դիտարկվել է վերջնարդյունահենք կրթության ապահովումը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով կրթական ծրագրերով սահմանված բոլոր վերջնարդյունքների ձեռքբերմանը և դրանց հավաստմանը:

Մասնագիտական կրթության հաստատությունների դեպքում շեշտադրումը դրվել է աշխատանքային միջավայրում ուսուցման զարգացման, գործատուների հետ համագործակցության և ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա:



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Թարմացումներ Հավատարմագրման պետական գրանցամատյանում

Կարևորելով գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը՝ հավատարմագրման վերաբերյալ որոշումները, վկայականները և այլ վերաբերելի փաստաթղթերը շարունակում են հասանելի լինել Հավատարմագրման պետական գրանցամատյանում՝ հայերենով և անգլերենով:

Հավատարմագրման պետական գրանցամատյանը կապակցված է Եվրոպական որակի արտաքին ապահովման արդյունքների շտեմարանին **(DEQAR),** որի շնորհիվ գրանցամատյանում հրապարակված արդյունքները համաժամանակյա կերպով արտացոլվում են նաև միջազգային հարթակում՝ ապահովելով ՈԱԱԿ փորձագիտական զեկույցների և Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների միջազգային տեսանելիությունը:

Հաշվետու տարում **DEQAR** հարթակում ներբեռնվել է **4** բուհի արտաքին գնահատման փորձագիտական զեկույց:


Այս գործընթացը նպաստում է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի թափանցիկության բարձրացմանը և հայաստանյան որակավորումների միջազգային ճանաչելիության ամրապնդմանը:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրում

2025 թվականին ՈԱԱԿ-ն իրականացրել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ **19** միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում, որոնցից **15**-ը՝ պետական, իսկ **4**-ը՝ ոչ պետական:

Պետական ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրումն իրականացվել է պետության ֆինանսավորմամբ, իսկ ոչ պետական հաստատությունները՝ ինքնաֆինանսավորմամբ: Նշված **19** ուսումնական հաստատություններից **12**-ը գտնվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում, իսկ **7**-ը՝ երկրորդ շրջափուլում:



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

2025 թվականին ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ են իրականացվել հետևյալ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում.

1. Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
2. Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
3. Արարատի պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
4. Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
5. Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ (2-րդ շրջափուլ),
6. Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ (2-րդ շրջափուլ),
7. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ (2-րդ շրջափուլ),
8. Նոյեմբերյանի պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
9. Չարենցավանի պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
10. Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
11. Կապանի արվեստի պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
12. Մեղրու պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
13. Գավառի արվեստի պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
14. Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ (1-ին շրջափուլ),
15. Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ (1-ին շրջափուլ),
16. Երևանի պարարվեստի պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
17. Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
18. Հյուսիսային համալսարանի քոլեջ (1-ին շրջափուլ),
19. Շուշիի տեխնոլոգիական քոլեջ (1-ին շրջափուլ):

ՈԱԱԿ-ը կազմակերպել է **4-օրյա** առցանց աշխատաժողով, որին մասնակցել է շուրջ **75** աշխատակից:
Կազմակերպվել են նաև խորհրդատվական **2** հանդիպումներ:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

ՄԿՈՒ հաստատությունների ծրագրային հավատարմագրում

2025 թվականին ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ և առաջարկությունների հիման վրա, պետության ֆինանսավորմամբ, առաջին անգամ իրականացվել են ծրագրային հավատարմագրման գործընթացներ **5** միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում՝ «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագրի շրջանակում:

Գործընթացի առաջին անգամ իրականացվելու պայմաններում առաջնահերթություն է տրվել քոլեջների կարողությունների նպատակային զարգացմանը: Այդ նպատակով մշակվել և ներդրվել են համապատասխան մեթոդական ձևաչափեր և գործիքակազմ, ինչպես նաև կազմակերպվել են կարողությունների զարգացմանն ուղղված աշխատաժողովներ:

Իրականացվել է **8** աշխատաժողով՝ ներկայացվել են կիրառվող ձևաչափերը, ինքնավերլուծության իրականացման սկզբունքները, ինչպես նաև տրամադրվել են ծրագրային հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մանրամասն մեկնաբանություններ:

Ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվել են հետևյալ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում.

Մարտունու պետական բժշկական քոլեջ
Վանաձորի պետական բժշկական քոլեջ
Գյումրու պետական բժշկական քոլեջ
Երևանի հենակետային պետական բժշկական քոլեջ
Արարատի պետական բժշկական քոլեջ

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրման վերաբերյալ որոշումների կայացում

2025 թվականի ընթացքում ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է հետևյալ **28** ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները.

- Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Արարատի պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ, **4 տարի պայմանով**,
- Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության, հայ-հունական պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Գրիգորիս բժշկա-հումանիտար քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Հյուսիսային համլսարանի քոլեջ, **4 տարի պայմանով**,
- Գյումրու պետական տեխնիկական քոլեջ, **4 տարի պայմանով**,
- «Մխիթար Սեբաստացի» կրթահամիլիրի քոլեջ, **6 տարի** ժամկետով,
- Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Բերդի բազմագործառութային քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Ավիաուսումնական կենտրոն, **4 տարի պայմանով**,
- Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ, **4 տարի պայմանով**,

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրման վերաբերյալ որոշումների կայացում

2025 թվականի ընթացքում ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է հետևյալ **28** ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները.

- Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ, **4 տարի պայմանով**,
- Կապանի պետական բժշկական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ, **6 տարի** ժամկետով,
- Պրովիզոր-նկարի Լ. Սարգսյանի անվան բժշկական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Ալավերդու պետական քոլեջ, **4 տարի պայմանով**,
- Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ, հավատարմագրումը **մերժված** է,
- Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ, **4 տարի պայմանով**,
- Մաշտոցի անվան համալսարանի քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ, **4 տարի պայմանով**:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Համակարգային խնդիրների լուծման նախաձեռնում ՄԿՈՒ ոլորտում

ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների ընթացքում ՈԱԱԿ-ը, դիտարկելով հաստատությունների զարգացման դինամիկան և վերլուծելով առկա խնդիրներն ու մարտահրավերները, կարևորել է նաև հաստատությունների ներքին կարողությունների զարգացման ուղղությամբ համակարգված աշխատանքների իրականացումը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում արձանագրվել է, որ հաստատություններում տվյալների վրա հիմնված որոշումների կայացման մշակույթը բավարար չափով ձևավորված չէ, ինչպես նաև գնահատման գործընթացներում սահմանափակ են ուսանողների վերլուծական և մասնագիտության շրջանակում որոշումներ կայացնելու կարողությունները զարգացնող առաջադրանքները:

Տվյալների վրա հիմնված ինքնավերլուծության մշակույթի ձևավորման անհրաժեշտությունից ելնելով՝ **ՈԱԱԿ**-ի նախաձեռնությամբ **Erasmus+** ծրագրի շրջանակում մեկնարկել է **QA4VET** («Փորձնական հավատարմագրման **(Mock accreditation)** իրականացում՝ աջակցելու որակի ապահովմանը Հայաստանի ՄԿՈՒ հաստատություններում») ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակը **ՄԿՈՒ** հաստատություններում վերլուծական կարողությունների ձևավորումն ու ինքնավերլուծության մշակույթի զարգացումն է՝ փորձնական **(Mock)** հավատարմագրման մոդելի կիրառմամբ:

Ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը կազմակերպել է կարողությունների զարգացման մի շարք աշխատաժողովներ՝ ուղղված կրթական ծրագրերի քարտեզագրմանը, ուսումնառության վերջնարդյունքներին համահունչ դասավանդման և գնահատման մեթոդների ընտրությանը, ինչպես նաև ռեսուրսային ապահովման համապատասխանության ինքնագնահատման գործընթացների ձևավորմանն ու զարգացմանը:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Համակարգային խնդիրների լուծման նախաձեռնում ՄԿՈՒ ոլորտում


2025 թվականին **ՈԱԱԿ**-ը **Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի** աջակցությամբ մշակել և փորձարկել է «ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների հետազոտական և թվային կարողությունների զարգացում» ծրագիրը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, ագրարային և բժշկական ոլորտներում ներգրավված դասավանդողների կարողությունների զարգացման նպատակով:

Ծրագրի շրջանակում իրականացվել է դասընթացի բովանդակության և մեթոդական մոտեցումների մշակումը, որոնք փորձարկվել են ընտրված քոլեջների դասախոսների հետ՝ փորձնական վերապատրաստումների ձևաչափով:

Ընդհանուր առմամբ, իրականացվել են փորձնական սեմինարներ երեք ոլորտներում, որոնց ընթացքում գնահատվել է առաջարկվող մոտեցումների կիրառելիությունն ու արդյունավետությունը:

Ծրագրի շրջանակում ձևակերպվել է նաև «հետազոտական քայլերի վեցաստիճան մոդելը» (հետաքրքրասիրությունից մինչև կիրառություն և բարելավում), որը կիրառվել է որպես ուսուցման կառուցվածքային հիմք և փորձարկվել դասախոսների հետ աշխատանքում:

Արդյունքում ձևավորվել է վերապատրաստման բովանդակություն և մեթոդական լուծում, որը պատրաստ է լայնածավալ կիրառման և հնարավորություն է տալիս ՄԿՈՒ համակարգում աստիճանաբար ներդնել կիրառական հետազոտության վրա հիմնված ուսուցման մոտեցումը:



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Մշտադիտարկումներ բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ և ծրագրային **10** մշտադիտարկում:

Մասնագիտական ուսումնական **15** հաստատություններում դիտարկվել են որակի ապահովման մշակույթի զարգացման ընթացքը, կրթական ծրագրերի իրականացումը և դրանց համապատասխանությունն աշխատաշուկայի պահանջներին:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշտադիտարկումների առանցքում են եղել.

- Հավատարմագրման հանձնաժողովի որոշումներով շեշտադրված ուղղություններով բուհի առաջընթացը,
- թերությունների վերացման ծրագրերի իրականացման ընթացքը,
- կրթական ծրագրերի ներքին աուդիտի արդյունքները և դրանց հիման վրա կատարված փոփոխությունները,
- կրթական ծրագրերով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման և հավաստման մեխանիզմները,
- որակի ապահովման համակարգի ազդեցությունը կրթական ծրագրերի խնդիրների վերհանման և բարելավման վրա:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Մշտադիտարկումներ բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում

Մասնագիտական ուսումնական հաստատություններում մշտադիտարկումները կենտրոնացած են եղել.

- հավատարմագրման գործընթաց անցած կամ երկրորդ շրջափուլում գտնվող հաստատությունների բարելավման ծրագրերի իրականացման ընթացքի և արդյունքների վրա,
- շրջանավարտների հետագծի ուսումնասիրման մեխանիզմների վրա,
- կրթական ծրագրերի ադապտացմանը տեղական աշխատաշուկայի պահանջներին,
- գործատուների հետ համագործակցության արդյունավետության և դրա ազդեցության վրա կրթական գործընթացների կազմակերպման մեջ:

ՈԱԱԿ մշտադիտարկումների ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել հաստատությունների ղեկավարների, կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների (ներառյալ գործատու-դասավանդողների), ուսանողների և որակի ապահովման պատասխանատուների հետ: Յուրաքանչյուր մշտադիտարկում ամփոփվել է հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ, որի ընթացքում ներկայացվել են գործընթացի արդյունքում բացահայտված դրական կողմերը և առկա մարտահրավերները՝ ուղղված հետագա բարելավմանը:



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Մասնագիտությունների կրթական ծրագրեր


Կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքներ

Հաշվետու տարում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների շրջանակում ուսումնասիրվել են **2** բուհերի և **19** ՄԿՈՒ հաստատությունների շուրջ **63** մասնագիտությունների կրթական ծրագրեր, որի արդյունքում բացահայտվել են ծրագրերի ուժեղ և բարելավման կարիք ունեցող ուղղությունները:

Մասնագիտական քննարկումների արդյունքում կրթական ծրագրերում շեշտադրվել են հետևյալ ուղղությունները.

- վերջնարդյունահենք կրթական ծրագրերի իրականացում և սովորողների կարողությունների գնահատման մեխանիզմների զարգացում,
- կրթական ծրագրերի կապի ուժեղացում աշխատաշուկայի և գործատուների պահանջների հետ,
- ուսանողների կարողությունների զարգացմանն ուղղված գործնական բաղադրիչի ընդլայնում,
- ռեսուրսների համատեղ կիրառման և առցանց գործիքների ներդրման միջոցով գործնական ուսուցման հնարավորությունների ընդլայնում:

Ձևավորվել են մոտեցումներ դասախոսական կազմի կարողությունների զարգացման ուղղությամբ՝ կրթական ծրագրերի և դասընթացների նկարագրերի վերանայման և արդիականացման նպատակով:



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

«Կրթական ծրագրերի ներքին աուդիտ» նախագծի մեկնարկ՝ համակարգային կարողությունների ձևավորման և վերջնարդյունահենք կրթության իրականացման նպատակով

ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ մեկնարկել է **«Կրթական ծրագրերի ներքին աուդիտ» նախագիծը**:
Նախագիծը միտված է գործնականում ապահովելու **Հավատարմագրման հանձնաժողովի կողմից 2020 թվականից սահմանված պահանջի իրականացումը,** ըստ որի՝ բուհերը պարտավոր են իրականացնել կրթական ծրագրերի ներքին աուդիտ և ներկայացնել դրա արդյունքները հավատարմագրման գործընթացում:

Միաժամանակ, նախաձեռնությունը բխում է **2025 թվականին ընդունված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի** տրամաբանությունից՝ կենտրոնանալով կրթական ծրագրերով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման և դրանց հավաստման վրա:

Նախագծի շրջանակում ձևավորվել են երկու թեմատիկ հետազոտական խմբեր՝

- վերջնարդյունքների ձեռքբերում և հավաստում,
- կրեդիտների բաշխման և ուսանողների ծանրաբեռնվածության գնահատում:

Խմբերում ներգրավվել են ՀՀ հավատարմագրված շուրջ **25** բուհերի մոտ **120** ներկայացուցիչներ՝ կրթական ծրագրերի ղեկավարներ, դասախոսներ և որակի ապահովման մասնագետներ՝ ապահովելով տարբեր ինստիտուցիոնալ փորձի համադրումը և մշակվող լուծումների կիրառելիությունը:





Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

«Կրթական ծրագրերի ներքին աուդիտ» նախագծի մեկնարկ՝ համակարգային կարողությունների ձևավորման և վերջնարդյունահենք կրթության իրականացման նպատակով

Նախագծի մեկնարկին նախորդած քննարկումների արդյունքում արձանագրվել է, որ բուհերում առկա են կրթական ծրագրերի մշակման տարբեր մոտեցումներ, սակայն բացակայում են վերջնարդյունահենք կրթության իրականացման և գնահատման միասնական մեթոդաբանություններ, ինչպես նաև տվյալահենք որոշումների կայացման գործիքներ:

Այս հիմքով նախագծի շրջանակում ձևավորվում է կրթական ծրագրերի ներքին աուդիտի մեթոդաբանական և գործիքային հիմքը, որը հնարավորություն է տալիս գնահատել կրթական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանությունը, դրանց ձեռքբերումը և հավաստումը, ինչպես նաև ուսանողների իրական ծանրաբեռնվածության և կրթական ծրագրերի կառուցվածքի արդյունավետությունը:

Նախագծի գործնական փուլը մեկնարկել է **2025 թվականի դեկտեմբերի 12-ին՝** թեմատիկ հետազոտական խմբերի առաջին հանդիպմամբ: Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկել են կրթական ծրագրերի վերջնարդյունքների, ուսանողների ծանրաբեռնվածության, գնահատման գործիքների և կրեդիտների բաշխման փոխկապակցվածությունը՝ հստակեցնելով առկա համակարգային խնդիրները:

Հավատարմագրված շուրջ **20** բուհ ներկայացրել է կրթական ծրագրի աուդիտի վերաբերյալ տվյալներ: **5** բուհ ավարտել է կրթական բոլոր ծրագրերի աուդիտի մեկ շրջափուլը և գտնվել արդյունքների ամփոփման և բարելավման ծրագրերի կազմման գործընթացում:

Հաշվետու տարում նախագծի տրամաբանությունն արդեն արտացոլվել է ինքնավերլուծության պահանջներում:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Կրթական ծրագրերի բարելավման լավ փորձերի տարածման աշխատաժողովներ

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է կրթական ծրագրերի բարելավման լավ փորձերի քննարկման և տարածմանն ուղղված հանդիպումների կազմակերպումը՝ ձևավորելով բուհերի միջև փորձի փոխանակման և մասնագիտական երկխոսության շարունակական հարթակ:

2025 թվականին կրթական ծրագրերի բարելավման և ներքին աուդիտի իրականացման իրենց փորձառությունն են ներկայացրել շուրջ մեկ տասնյակ բուհեր, այդ թվում՝

- Երևանի պետական համալսարանը,
- ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը,
- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը,
- Գավառի պետական համալսարանը,
- Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանը,
- Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանը,
- Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը,
- ՀՀ ԳԱԱ Գիտակրթական կենտրոնը,
- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը,
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը,
- Հայկական բժշկական ինստիտուտը,
- Ավանդական բժշկության համալսարանը և այլն:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում


Կրթական ծրագրերի բարելավման լավ փորձերի տարածման աշխատաժողովներ

Աշխատաժողովների ընթացքում ներկայացված հաջողված օրինակները վերաբերել են մասնավորապես.

- վերջնարդյունքների ձեռքբերման և դրանց հավաստման մեխանիզմների կատարելագործմանը,
- գնահատման գործիքների և մեթոդների վերանայմանը,
- համանման կրթական ծրագրերի հետ համեմատական վերլուծության գործիքների ներկայացմանը և ուսումնական պլանների վերանայմանը,
- գործատուների հետ համագործակցության ընդլայնմանը և գործնական բաղադրիչի ուժեղացմանը:

Քննարկումները հնարավորություն են տվել համադրել տարբեր բուհերի փորձը, բացահայտել ընդհանուր խնդիրներն ու կիրառվող լուծումները, ինչպես նաև ձևավորել միասնական մոտեցումների հիմքեր կրթական ծրագրերի բարելավման գործընթացում:

Աշխատաժողովներին մասնակցել են ՀՀ բուհերից և մասնագիտական ուսումնական հաստատություններից ավելի քան **500** ներկայացուցիչներ՝ ներառյալ հաստատությունների ղեկավարներ, կրթական ծրագրերի պատասխանատուներ, դասախոսներ և որակի ապահովման մասնագետներ:



Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Ձեռքբերումներ

Հաշվետու տարվա և «Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում» ռազմավարական նպատակի վերլուծության արդյունքում առանձնացվում են հետևյալ հիմնական ձեռքբերումները.

- ձևավորվել են գնահատման և որոշումների կայացման միասնական մոտեցումներ, որոնք կիրառվում են հաստատությունների կողմից ինքնավերլուծության և ծրագրերի գնահատման գործընթացներում,
- ներդրված համատեղ և կրկնակի հավատարմագրման մոդելներն ապահովել են միջազգային վստահելիության աճ և բարձրացրել են համակարգի նկատմամբ արտաքին ճանաչումը,
- ՄԿՈՒ համակարգում ծրագրային հավատարմագրման մեկնարկը ձևավորել է ծրագրային մակարդակով գնահատման կիրառման գործնական հիմք,
- որոշումների կայացման հստակեցված սկզբունքներն ու սանդղակները կիրառվում են գնահատման գործընթացներում՝ ապահովելով դրանց միատեսակությունն ու կանխատեսելիությունը,
- մշտադիտարկման մեխանիզմների զարգացումը հանգեցրել է տվյալահենք վերլուծության կիրառմանը հաստատությունների կողմից,

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Ձեռքբերումներ

- վերջնարդյունահենք կրթության մոտեցումներն ինտեգրվել են կրթական ծրագրերի գնահատման և բարելավման գործընթացներում,
- կրթական ծրագրերի ներքին աուդիտի նախագծի շրջանակում ձևավորվել է համակարգային մոտեցման հիմք՝ 25 բուհի անմիջական ներգրավմամբ և համատեղ գործիքների մշակմամբ,
- ՄԿՈՒ դասախոսների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակում ձևավորվել և փորձարկվել են գործնական մեթոդներ, որոնք ուղղված են ուսուցման գործընթացում կիրառական հետազոտության ներդրմանը,
- ապահովվել է հավատարմագրման արդյունքների թափանցիկությունը և միջազգային տեսանելիությունը՝ բարձրացնելով համակարգի նկատմամբ վստահությունը,
- ձևավորվել են բուհերի միջև համագործակցության և փորձի փոխանակման հարթակներ, որտեղ ՈԱԱԿ-ի մոտեցումները ծառայում են որպես ընդհանուր համակարգային հիմք:



Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

Հաջողության չափանիշ՝
Մասնագիտական կրթության խնդիրների և ուսանողների կարիքների վերաբերյալ հետազոտական հենքը մեծացել է:
Ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնելու համար առկա են բավարար քանակի մասնագետներ:

Փաստեր

Փորձագիտական բազայի նպատակային ընդլայնում՝ ՀՀ-ում փորձագիտական ներուժի զարգացման նպատակով

2025 թվականին ՈԱԱԿ-ը շարունակել է ՀՀ-ում փորձագիտական կարողությունների զարգացմանն ուղղված գործունեությունը՝ ապահովելով ոլորտային մասնագետների ներգրավումը և փորձագիտական բազայի նպատակային ընդլայնումը:

Այս շրջանակում վերանայվել է փորձագիտական խմբերի ձևավորման կարգը, և դրա պահանջներին համապատասխան իրականացված վերապատրաստումների արդյունքում ապահովվել է համապատասխան մասնագիտական կազմով փորձագիտական խմբերի ձևավորումը:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը կազմակերպել է փորձագիտական վերապատրաստումներ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների (դասախոսներ, որակի ապահովման պատասխանատուներ, կրթական ծրագրերի պատասխանատուներ) համար՝ փորձագիտական բազան անհրաժեշտ ոլորտները ներկայացնող մասնագետներով համալրելու նպատակով:

Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

Իրականացվել են ոլորտային (բժշկություն, SS, արվեստ, գյուղատնտեսություն և այլն) վերապատրաստումներ՝ փորձագետների պատրաստման նպատակով՝ ներգրավելով **61** մասնակից **23** ուսումնական հաստատություններից: Վերապատրաստված փորձագետները հետագայում ներգրավվել են ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության գործընթացներում՝ համապատասխանեցվելով գնահատվող կրթական ծրագրերի մասնագիտական ուղղվածությանը:

Բժշկական կրթական ծրագրերի հավատարմագրման շրջանակում կազմակերպվել են ոլորտային վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված բժշկական կրթության ոլորտում փորձագիտական կարողությունների զարգացմանը: Դասընթացներին ներգրավվել են բժշկական ուսումնական հաստատությունների դասախոսներ և ոլորտի ներկայացուցիչներ:

2025թ. իրականացվել է **2** վերապատրաստում՝ ներգրավելով շուրջ **31** ներկայացուցիչ բժշկական հաստատություններից և բժշկական քոլեջներից:

Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

Փորձագիտական խմբերում ներգրավվող ուսանողների կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով ՈԱԱԿ-ի **«Ուսանողության ձայն»** նախագծի շրջանակում շարունակվել են դասընթացները՝ կազմակերպելով **4** դասընթաց ՀՀ տարբեր բուհերից և քոլեջներից ներգրավված ուսանողների մասնակցությամբ: Արդյունքում ուսանող-փորձագետների բազան համալրվել է շուրջ **55** ուսանողով:

Միաժամանակ կազմակերպվել են նաև ՄԿՈՒ հաստատությունների «Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողների համար նախատեսված **2** վերապատրաստման դասընթաց՝ **20** ուսանողի մասնակցությամբ, այդ թվում՝ առցանց ձևաչափով, ինչը հնարավորություն է տվել ապահովել նաև մարզային ուսանողների մասնակցությունը:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններից **5** ուսանող ընդգրկվել է **Եվրոպական ուսանողական միության (ESU)** որակի ապահովման փորձագիտական բազայում:

2025թ. բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացներում ներգրավվել են **11** փորձագետներ, որոնցից **5**-ը՝ տեղացի փորձագետներ, **4**-ը միջազգային փորձագետներ, **2**-ը՝ ուսանող փորձագետներ:

2025թ. ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրման գործընթացներում ներգրավվել են **61** փորձագետներ, որոնցից **42**-ը՝ տեղացի փորձագետներ, իսկ **19**-ը՝ ուսանողներ ՀՀ տարբեր ուսումնական հաստատություններից և կազմակերպություններից:

Ուսանողության ձայն

Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

Փորձագիտական կարողությունների զարգացում և կատարելագործում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ փորձագետները ներգրավվել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող աշխատաժողովներում, վեբինարներում և մասնագիտական քննարկումներում, որոնք ուղղված են եղել փորձագիտական զեկույցների կազմման և արդյունահենք խորհրդատվությունների ձևակերպման մոտեցումների հստակեցմանը:

Միաժամանակ, փորձագետները ներգրավվել են նաև միջազգային կառույցների հետ համագործակցությամբ կազմակերպված համաժողովներում: Մասնավորապես.

- Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի **(ENQA)** այցի շրջանակում քննարկվել են ՀՀ կրթական բարեփոխումների ընթացիկ օրակարգը և որակի ապահովման համակարգի ռազմավարական առաջնահերթությունները,
- Եվրոպական կրթական հիմնադրամի **(ETF)** հետ համագործակցությամբ ներկայացվել են շրջանավարտների հետագծի ուսումնասիրման գործիքակազմերը,
- կազմակերպվել են ձևավորող գնահատմանը նվիրված մասնագիտական քննարկումներ և աշխատաժողովներ:



Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

Ձեռքբերումներ

Հաշվետու տարվա և ռազմավարական հնգամյա շրջափուլի արդյունքների վերլուծությունը՝ ռազմավարական ծրագրի՝ «ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում» նպատակի շրջանակում, թույլ է տալիս առանձնացնել փորձագիտական կարողությունների զարգացման հետևյալ հիմնական ձեռքբերումները.

- ձևավորվել և կիրառվում է մասնագիտական կրթության խնդիրների և ուսանողների կարիքների վերաբերյալ վերլուծական հենք՝ հիմնված փորձագիտական քննարկումների, աշխատաժողովների և ոլորտային վերապատրաստումների վրա,
- ընդլայնվել և մասնագիտացվել է փորձագիտական բազան՝ ներառելով տարբեր ոլորտների (բժշկություն, SS, գյուղատնտեսություն և այլն) փորձագետներ, ինչն ապահովում է կրթական ծրագրերի մասնագիտական գնահատումը,
- ներդրվել է ոլորտային վերապատրաստումների մոտեցումը, որի արդյունքում փորձագետների կարողությունները համապատասխանեցվել են գնահատվող կրթական ծրագրերի առանձնահատկություններին,

Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

Ձեռքբերումներ

- ընդլայնվել է ուսանող-փորձագետների բազան և ապահովվել է նրանց ներգրավվածությունն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային գնահատման գործընթացներում,
- զարգացել են փորձագետների վերլուծական և գնահատման կարողությունները՝ ապահովելով ավելի որակյալ փորձագիտական զեկույցներ և կիրառելի խորհրդատվություններ,
- փորձագիտական գնահատումների արդյունքները կիրառվում են հաստատությունների ռազմավարական պլանավորման և կրթական ծրագրերի բարելավման գործընթացներում,
- ձևավորված փորձագիտական ներուժն ապահովում է ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացումը տարբեր ոլորտներում:

Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Հաջողության չափանիշ՝ Կրթության որակի մշակույթի շուրջ շահակիցների տարբեր խմբերի միջև հաղորդակցության և համագործակցության մեծացում:

Փաստեր

Շահակիցների հետ համագործակցության արդյունքներ

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է զարգացնել շահակիցների հետ հաղորդակցության և համագործակցության ձևաչափերը:

Մասնավորապես.

- ՀՀ ԿԳՄՍՆ-ի և Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ՝ քննարկվել են բարձրագույն կրթության բարեփոխումների ընթացքը, ընթացիկ իրավակարգավորումների կատարելագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև ՄԿՈՒ ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը,
- իրականացվել են մասնագիտական քննարկումներ ՄԿՈՒԶԱԿ-ի հետ՝ պետական կրթական չափորոշիչների և կրթական ծրագրերի մշակման մոտեցումների շուրջ:



Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

2025 թվականի ընթացքում **ՈԱԱԿ-ի և Երևանի պետական համալսարանի Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր**, որի նպատակն է ամրապնդել բուհ-գործատու համագործակցությունը և նպաստել կրթության կառավարման և կազմակերպման ոլորտներում մասնագետների մրցունակության բարձրացմանը:

Հուշագրի շրջանակում նախատեսվել է.

- ուսանողների պրակտիկայի կազմակերպում ՈԱԱԿ-ում,
- ՈԱԱԿ մասնագետների ներգրավում դասավանդման գործընթացում,
- մագիստրոսական թեզերի համատեղ ղեկավարում,
- ինչպես նաև կենտրոնի դասախոսների ներգրավում հավատարմագրման փորձագիտական գործընթացներում:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի աշխատակցի կողմից «Կրթության կազմակերպում» ՄԿԾ-ում դասավանդման արդյունքում ապահովվել է ուսանողների ներգրավումը գործակալության գործունեության մեջ, որի արդյունքում 3 ուսանող համալրել է ՈԱԱԿ աշխատակազմը:

2025 թ-ին **ՈԱԱԿ-ը Երևանի պետական համալսարանի և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 5 մագիստրանտների** համար ստեղծել է մասնագիտական պրակտիկայի անցկացման և մագիստրոսական թեզերի շրջանակում հետազոտությունների իրականացման հնարավորություններ՝ նպաստելով նրանց մասնագիտական կարողությունների զարգացմանը:



Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված համագործակցության ընդլայնում

Այս ուղղությամբ.

- ձևավորվել են բուհերի միջև կրթական ծրագրերի շուրջ հաղորդակցության հարթակներ՝ կազմակերպելով կրթական ծրագրերի բարելավման լավ փորձին նվիրված քննարկումներ, ինչպես նաև նախաձեռնելով **«Կրթական ծրագրերի ներքին աուդիտ»** նախագիծը՝ ուղղված համակարգային բարելավման մեխանիզմների ձևավորմանը,
- իրականացվել են կրթական ծրագրերի համակարգային բարելավմանը միտված ոլորտային աշխատաժողովներ, որոնք կազմակերպվել են բուհերի մասնագիտական առանձնահատկություններին համապատասխան՝ ներգրավելով **8** բուհի շուրջ **310** մասնակից հետևյալ ոլորտներում՝ արվեստ և մշակույթ, բժշկություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, ճարտարապետություն և շինարարություն,
- ոլորտային քննարկումներին ներգրավվել են նաև փորձագետներ, գործատուներ և գործատու-դասավանդողներ՝ ապահովելով կրթական ծրագրերի բարելավման գործընթացի կապն աշխատաշուկայի պահանջների հետ,
- **Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի** աջակցությամբ իրականացվել է դասախոսների կարողությունների զարգացման ծրագիր, որի շրջանակում շուրջ **80** դասախոս և գործատու-դասավանդողներ (ագրարային, բժշկական և SS ոլորտներից) ծանոթացել են կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի զարգացմանը նպաստող մոտեցումներին և գործիքներին:

Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Ուսանողների ակտիվ ներգրավվածություն և համագործակցության զարգացում

Հաշվետու տարվա ընթացքում ընդլայնվել է ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում՝ ձևավորելով երկխոսության և փորձի փոխանակման բազմազան հարթակներ: Այս ուղղությամբ.

- իրականացվել են հանդիպումներ կրթության կառավարման և կազմակերպման ուղղության կրթական ծրագրերի ուսանողների հետ (Երևանի պետական համալսարան, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)՝ քննարկելու ոլորտում առկա խնդիրները և ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում,
- **«Ուսանողության ձայն»** նախագծի շրջանակում կազմակերպվել են **4** հանդիպումներ՝ շուրջ **80** ուսանողների մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվել են կրթական համակարգի հիմնախնդիրները և ներկայացվել է ուսանող-փորձագետների փորձը,
- կազմակերպվել են հանդիպումներ **Եվրոպական ուսանողական միության (ESU)** անդամ ուսանողների մասնակցությամբ՝ նպաստելով միջազգային փորձի փոխանցմանը և ուսանողների ներգրավվածության խթանմանը,

Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Ուսանողների ակտիվ ներգրավվածություն և համագործակցության զարգացում

- Կալիֆորնիայի Դեվիս համալսարանի հետ համագործակցությամբ իրականացվել են վեբինարներ ՀՀ տարբեր բուհերի ուսանողների մասնակցությամբ՝ **«Article 26 Backpack»** նախաձեռնության շրջանակում՝ ուղղված ուսանողների ակադեմիական և մասնագիտական շարժունության խթանմանը: Հաշվետու տարում կազմակերպվել է նաև ուսանողական աշխատաժողով **«Փաստաթղթերի անվտանգ պահպանումը «Article 26 Backpack»-ի միջոցով»** խորագրով Հայաստանի եվրոպական համալսարանում, որի ընթացքում ներկայացվել է թվային հարթակը որպես ուսանողների ակադեմիական և մասնագիտական ձեռքբերումների պահպանման, կառավարման և միջազգային փոխանակման գործիք: Աշխատաժողովի ընթացքում ՀՀ տարբեր բուհերից շուրջ **60** ուսանողներ ծանոթացել են հարթակի գործառույթներին, այդ թվում՝ ակադեմիական փաստաթղթերի անվտանգ պահպանման, միջազգային կրթական և մասնագիտական հնարավորությունների հասանելիության, ինչպես նաև ուսումնական և կարիերայի պլանավորման աջակցող մեխանիզմներին:



Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Լուսաբանում

Հաշվետու 2025թ. ընթացքում ՈԱԱԿ-ը, հավատարիմ իր առաքելությանը՝ ապահովել հաշվետվողականություն իր բոլոր շահակիցների համար, առաջնորդվելով 2021-2025թթ. ռազմավարական ծրագրով և տարեկան գործողությունների պլանով, ապահովել է ՈԱԱԿ գործունեության հանրայնացումը պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում և լրատվամիջոցներում:

Հիմնադրամի գործունեության հանրայնացում

ՈԱԱԿ-ի գործունեությունը լայնորեն լուսաբանվել է պաշտոնական կայքում **(www.anqa.am),** սոցիալական ցանցերում **(Facebook, LinkedIn, YouTube)** և լրատվամիջոցներում:

Հաշվետու տարում պաշտոնական կայքում հրապարակվել է 180 հրապարակում՝ և հայերեն, և անգլերեն:



Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Լուսաբանված հիմնական միջոցառումներ

- **27** փորձագիտական այց՝ բուհեր և քոլեջներ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման նպատակով,
- **36** հավատարմագրման որոշում՝ կայացված հավատարմագրման հանձնաժողովի կողմից,
- **8** ծրագրային հավատարմագրման գործընթաց՝ **5** ՄԿԾ քոլեջում, **3** ՄԿԾ բուհում,
- **29** աշխատաժողով (այդ թվում՝ առցանց)՝ Հայաստանում և արտերկրում՝ փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման նպատակով,
- **17** հանդիպում շահակիցների հետ,
- **7** վերապատրաստում՝ փորձագետների, ուսանող փորձագետների և հավատարմագրվող հաստատությունների աշխատակիցների մասնակցությամբ,
- **1** համագործակցության հուշագիր՝ ստորագրված,
- **3** միջազգային աշխատաժողով՝ ՈԱԱԿ-ի կազմակերպմամբ,
- **9** աշխատաժողով՝ ՈԱԱԿ-ի կազմակերպմամբ՝ հայաստանյան շահակիցների մասնակցությամբ,
- **1** անդամակցություն՝ Ակադեմիական ազնվության համաշխարհային ցանց **(GAIN),**
- **25** որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկում՝ **10** բուհ, **15** քոլեջ,
- **4** աշխատաժողով՝ նվիրված ՄԿԾ բարելավման հաջողված փորձի ներկայացմանը,
- **5** աշխատաժողով՝ նվիրված ՄԿԾ ներքին աուդիտին,
- **12** համաժողով՝ **3**-ը՝ միջազգային և հայաստանյան շահակիցների մասնակցությամբ, **9**-ը՝ հայաստանյան շահակիցների մասնակցությամբ,
- **7** շահակիցների հանդիպում և վերապատրաստում՝ «ՄԿՈւ հաստատությունների դասախոսների հետազոտական և թվային կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում,
- **5** ուսանող՝ Եվրոպական ուսանողական միությունում:

Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Պաշտոնական կայքի վերլուծություն

Հաշվետու տարում, ըստ **Google Analytics** տվյալների, ՈԱԱԿ պաշտոնական կայքն (anqa.am) արձանագրել է ցուցանիշների զգալի աճ: Կայքն ունեցել է **74,000** էջադիտում և **33,000** ակտիվ օգտատեր:

Օգտատերերն ընդհանուր առմամբ կատարել են **151,000** գործողություն (Event count):

Համեմատության համար նշենք, որ նախորդ հաշվետու տարում կայքն ունեցել էր **32,752** ակտիվ օգտատեր և **117,567** գործողություն: Այսպիսով, գործողությունների թիվն աճել է շուրջ **28%**-ով, իսկ նոր օգտատերերի հոսքը՝ **58%**-ով:

Ամենաշատ դիտված էջեր

- ✓ **Գլխավոր էջ (12,246 դիտում)**
- ✓ **Հավատարմագրում (10,002 դիտում՝ +28% աճ)**
- ✓ **Գլխավոր էջ (անգլերեն/Accreditation) (4,055 դիտում՝ +377% աճ)**
- ✓ **Լուրեր (2,416 դիտում՝ +95% աճ)**



Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Կայքի օգտատերերի վերլուծություն


Տեխնիկական դիտարկում. 2025 թվականին կայքի ընդհանուր այցելությունների թիվը կազմել է 33,000: Միաժամանակ տարվա ընթացքում արձանագրվել է շուրջ 11,000 այցելություն Չինաստանից, որոնք տեխնիկական վերլուծության համաձայն պայմանավորված են եղել ավտոմատացված համակարգերի (AI տվյալների հավաքագրման) գործունեությամբ: Հաշվի առնելով, որ նշված այցելությունները չեն ներկայացնում իրական օգտատերերի վարքագիծ, վերլուծական եզրակացությունները կատարվել են մաքրված տվյալների հիման վրա:


- Ըստ երկրների (մաքրված տվյալներ).
  Հայաստան (92.8%),
  ԱՄՆ (2.2%),
  ՌԴ (1.7%),
  Գերմանիա (0.8%),
  Ֆրանսիա (0.7%),
  Վրաստան (0.5%):


- Ըստ քաղաքների.
  Երևան (80.3%),
  Գյումրի (4.5%),
  Վանաձոր (3.2%),
  Արտաշատ (2.2%),
  Գորիս (1.8%):


Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Կայքի օգտատերերի վերլուծություն









Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Գործունեություն սոցիալական ցանցերում

Facebook

2025թ. ՈԱԱԿ-ի Facebook էջում հրապարակվել է **273** գրառում՝ լուսանկարներով, տեսանյութերով և մասնագիտական տեքստերով: Էջի հետևորդների թիվն աճել է **11.6%**-ով՝ հասնելով **7,065**-ի:

Տարեկան ցուցանիշներ.


- ✓ **Դիտումներ (Views). 1,958,370**
- ✓ **Ներգրավվածություն (Engagement). 160,009 (+103.8% աճ նախորդ տարվա համեմատ)**
- ✓ **Արձագանքներ (Reactions). 52,685**
- ✓ **Տարածումներ (Shares). 2,260**


Բովանդակության տեսանկյունից օգտատերերն առավել նախընտրել են բազմալուսանկար գրառումները **(62.8%)**: Լսարանի **67.1%**-ը կազմել են չհետևող օգտատերերը, ինչը վկայում է էջի բարձր տեսանելիության մասին:


Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Գործունեություն սոցիալական ցանցերում

Facebook







Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Գործունեություն սոցիալական ցանցերում

LinkedIn

LinkedIn հարթակում **2025** թվականին գրանցվել է ակտիվության աճ: Էջն ունի **614** հետևորդ, որից **94**-ը ավելացել են հաշվետու տարում:

Տարեկան ցուցանիշներ.

- ✓ **Ցուցադրումներ (Impressions). 7,987**
- ✓ **Էջի դիտումներ. 274**
- ✓ **Արձագանքներ. 312**

ՋԼՄ-ներում լուսաբանում

2025թ. ՈԱԱԿ-ի վերաբերյալ ՋԼՄ-ներում կատարվել է **13** լուսաբանում: Հիմնական թեմատիկաներն են եղել.

- ✓ **Միջազգային աշխատաժողովները,**
- ✓ **ՄԿՈւ ոլորտում ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ իրականացվող ծրագրերը,**
- ✓ **Ուսանող-փորձագետների դերակատարումն ու հաջողությունները Հայաստանում և արտերկրում,**
- ✓ **Միջազգային համագործակցություն և անդամակցություններ,**
- ✓ **Համագործակցության հուշագրերի ստորագրում:**

Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Գործունեություն սոցիալական ցանցերում

Հիմնական լուսաբանող հարթակներ. Հանրային ՀԸ («Առաջին լրատվական», «Առավոտ Լուսո»), «Արմենպրես» լրատվական գործակալություն, Հանրային ռադիո:

Բովանդակային գործունեություն
Հաշվետու տարում հանրայնացվել և լուսաբանվել են հետևյալ գործընթացները.

- Հավատարմագրում. 24 քոլեջի և 3 բուհի ինստիտուցիոնալ, ինչպես նաև 5 ՄԿՈւ և 3 բուհական ծրագրային հավատարմագրում:
- Որոշումներ. Հավատարմագրման հանձնաժողովի նիստերի արդյունքում կայացված 36 որոշում:
- Մշտադիտարկում. Որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկում 10 բուհում և 15 քոլեջում:
- Միջոցառումներ. Շահակիցների մասնակցությամբ 12 ներքին և միջազգային համաժողովներ, ՄԿԾ ներքին աուդիտին նվիրված 5 աշխատաժողովներ:
- Համագործակցություն. Համագործակցության հուշագրերի ստորագրում և դրա շրջանակներում վերապատրաստումների իրականացում:






Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Գործունեություն սոցիալական ցանցերում

Առաջիկա քայլեր

1. **Տեխնիկական արդիականացում.** Կայքի վերլուծական տվյալների հավաստիությունն ապահովելու նպատակով իրականացնել ավտոմատացված (bot/AI) տրաֆիկի ֆիլտրում և սահմանափակում (Google Analytics կարգավորումների վերանայում):
2. **Անվտանգության ներդրում.** Սերվերային մակարդակում կասկածելի IP-հասցեների և անոմալ տարածաշրջանային ակտիվության վերահսկում և արգելափակում (օրինակ՝ Cloudflare bot կառավարման լուծումներ):
3. **Analytics-ի լիարժեք ինտեգրում.** Ակտիվացնել **Google Search Console-ը՝** որոնողական բանալի բառերի և օրգանական տրաֆիկի համալիր վերլուծության նպատակով, քանի որ դրանք այլևս տեսանելի չեն ստանդարտ Analytics միջավայրում:
4. **Կայքի մոբայլ տարբերակի բարելավում.** Հաշվի առնելով բջջային սարքերով այցելությունների բարձր տոկոսը՝ շարունակել կատարելագործել կայքի հարմարվողականությունը (responsive design):



Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Ձեռքբերումներ

2025թ-ի արդյունքների և **«Շահակիցների հետ նախաձեռնողական և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն»** ռազմավարական նպատակի իրականացման ամփոփումը ցույց է տալիս, որ էապես ընդլայնվել և համակարգվել են շահակիցների միջև հաղորդակցության և համագործակցության ձևաչափերը՝ նպաստելով կրթության որակի մշակույթի շուրջ փոխգործակցության խորացմանը՝ այն դարձնելով առավել համակարգային և նպատակային:

Այս համատեքստում արձանագրվել են հետևյալ հիմնական ձեռքբերումները.

- ձևավորվել են բազմաշահակից քննարկումների ձևաչափեր, որոնք ապահովում են բուհերի, ՄԿՈՒ հաստատությունների, գործատուների և ոլորտային մասնագետների համատեղ ներգրավվածությունը կրթական հարցերի քննարկմանը,
- ներդրվել են համագործակցային աշխատանքային մեխանիզմներ, որոնց շրջանակում տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ համատեղ մասնակցում են կրթական ծրագրերի բարելավման գործընթացներին,
- ընդլայնվել է գործատուների ներգրավվածությունը կրթական գործընթացների տարբեր փուլերում՝ ապահովելով կրթության և աշխատաշուկայի միջև ավելի ակտիվ փոխադարձ կապ,

Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Ձեռքբերումներ

- ապահովվել է ուսանողների ավելի ակտիվ մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին՝ ներառյալ փորձագիտական, խորհրդակցական և միջազգային հարթակներում ներգրավվածությունը,
- ձևավորվել են կրթության ոլորտում մասնագիտական համայնքներ, որտեղ շահակիցները պարբերաբար ներգրավվում են որակի ապահովման հարցերի քննարկմանը,
- ապահովվել է կրթության ոլորտը լուսաբանող լրագրողների հետ կայուն համագործակցություն՝ բարձրացնելով որակի ապահովման գործընթացների հանրային տեսանելիությունը և քննարկման մակարդակը,
- ձևավորվել են շարունակական երկխոսության պայմաններ, որոնց արդյունքում շահակիցների միջև համագործակցությունը ստացել է ավելի կայուն և նպատակային բնույթ:



Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

Հաջողության չափանիշ՝ Տարեկան կտրվածքով հրապարակվում են թեմատիկ վերլուծություններ, հաշվետվություններ: Շահակիցները բավավարված են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացներից և դրանց իրավակարգավորումնե րից:

Փաստեր

Իրավակարգավորումների մշակման և լրամշակման գործընթացներ

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ն ակտիվորեն ներգրավված է եղել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքի մշակման գործընթացում՝ մասնակցելով մասնագիտական քննարկումներին և ներկայացնելով հիմնավորված առաջարկություններ:

2025թ. ՈԱԱԿ-ը, Հավատարմագրման կարգում կատարված փոփոխությունների հիման վրա, նախաձեռնել և իրականացրել է մի շարք ներքին իրավական ակտերի մշակում և լրամշակում՝ ուղղված բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատությունների արտաքին գնահատման գործընթացների արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես, հաշվետու տարում հաստատման են ներկայացվել ՈԱԱԿ գործունեության առանցքային ուղղությունները կարգավորող հետևյալ իրավական ակտերը.

- փորձագիտական խմբի ձևավորման կարգը,
- ներքին կարգապահական կանոնները,
- հավատարմագրման գործընթացների վերաբերյալ բողոքների ներկայացման կարգը,
- հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշումների կայացման քաղաքականությունը:

Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

Բացի այդ, մշակվել և լրամշակվել են մի շարք իրավական ակտեր, որոնց հաստատումը նախատեսված է **2026** թ-ին, մասնավորապես.

- ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը (լրացումներ և փոփոխություններ),
- բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի մշտադիտարկումների քաղաքականությունն ու ընթացակարգը,
- ՈՒԱԱԿ էթիկայի և վարքագծի կանոնները (նոր խմբագրություն),
- ծրագրային հավատարմագրման ձևաչափերը (էլեկտրոնային հարցաշար, ծրագրային ինքնավերլուծության ուղեցույց, փորձագիտական զեկույցի ձևաչափ, թերությունների վերացման ծրագրի ձևաչափ),
- պայմանով հավատարմագրմանը հաջորդող արտաքին գնահատման ինքնավերլուծության և փորձագիտական զեկույցի ձևաչափերը:

Ընդունված և մշակման փուլում գտնվող իրավական ակտերն արտացոլում են ՈՒԱԱԿ գործունեության շարունակական բարելավման, շահակիցների առաջարկությունների և օրենսդրական փոփոխությունների նկատմամբ արձագանքման համակարգային մոտեցումը:

Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

Համակարգային վերլուծություններ

2025 թվականին ՈԱԱԿ-ը շարունակել է համակարգային և թեմատիկ վերլուծությունների իրականացումը՝ նպաստելով կրթության որակի ապահովման գործընթացների իրավակարգավորման և մեթոդաբանական հիմքերի զարգացմանը:

Այս ուղղությամբ շարունակվել է **հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատման տվյալների հավաքագրումը և վերլուծությունը,** որի արդյունքում ձևավորվել են գործընթացների կատարելագործման և իրավակարգավորումների հստակեցման ուղղություններ:

Erasmus+ ծրագրերի շրջանակում շարունակվել է **համակարգային վերլուծությունների և քաղաքականության փաստաթղթերի մշակումը,** որոնք ուղղված են կրթության համակարգի արդիականացմանը և եվրոպական չափանիշների հետ համադրելիության ապահովմանը:

Micro-GEAR
QA4VET
KPI4HE
eCAMPUS

Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

Համակարգային վերլուծություններ

2025 թվականին մասնավորապես.

- **Micro-GEAR** (Միկրոորակավորումներ Հայաստանի և Վրաստանի բարձրագույն կրթական համակարգի համար) ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ի կողմից մշակվել է **միկրոորակավորումների ներդրման և որակի ապահովման ազգային մեթոդաբանական շրջանակը**, որը սահմանում է միկրոորակավորումների նախագծման, իրականացման, գնահատման, որակի ապահովման և ճանաչման միասնական մոտեցումներ՝ համահունչ եվրոպական պահանջներին,

- **QA4VET** (Փորձնական հավատարմագրման իրականացում՝ աջակցելու որակի ապահովմանը Հայաստանի ՄԿՈւ հաստատություններում) ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ի կողմից մշակվել է **փորձնական հավատարմագրման (Mock accreditation) գործընթացի մեթոդաբանություն և գործիքակազմ,** որը միտված է հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգերի զարգացմանը, ինքնավերլուծության կարողությունների ձևավորմանը և տվյալահենք բարելավման գործընթացների խթանմանը,



Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

Համակարգային վերլուծություններ

2025 թվականին մասնավորապես.

- **KPI4HE** (Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) ազգային շրջանակի ստեղծում) ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ը մասնակցել է **բարձրագույն կրթության կառավարման և որակի գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) մշակմանը և իրականացրել է այդ շրջանակի փորձարկում,** ինչը հիմք է ստեղծում կրթության որակի գնահատման տվյալահենք և չափելի համակարգի ձևավորման համար,

- **eCAMPUS** (Սոցիալական հեռավորություն և ներառական կամպուսային կրթության խթանումը Հայաստանի բուհերում) ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ի կողմից մշակվել է **թվային ուսուցման, ուսումնառության և գնահատման քաղաքականությունը,** որը սահմանում է թվային ուսուցման և գնահատման որակի ապահովման ուղղությունները և մեխանիզմները:



Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

Ձեռքբերումներ

2025 թ-ի արդյունքների և **«Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում» ռազմավարական նպատակի** իրականացման ամփոփումը ցույց է տալիս, որ էապես զարգացել և համակարգվել են կրթության որակի ապահովման ոլորտի իրավակարգավորումները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը համակարգում ընթացող բարեփոխումներին և միջազգային զարգացումներին:

Այս համատեքստում արձանագրվել են հետևյալ հիմնական ձեռքբերումները.

- արդիականացվել է ՈԱԱԿ-ի ներքին նորմատիվ-իրավական դաշտը՝ մշակելով կազմակերպության գործունեության առանցքային ուղղությունները կարգավորող իրավական ակտերի ամբողջական փաթեթ,
- ձևավորվել են միասնական և կիրառելի ընթացակարգեր՝ հավատարմագրման, մշտադիտարկման և որոշումների կայացման գործընթացների համար, ապահովելով դրանց միատեսակ կիրառումը,
- ապահովվել է կարգավորումների մշակման տվյալահենք մոտեցումը՝ հիմնվելով հավատարմագրման գործընթացների արդյունքների, թեմատիկ վերլուծությունների և օրենսդրական փոփոխությունների վրա,
- բարձրացել է շահակիցների վստահությունը ՈԱԱԿ-ի կողմից մշակվող կարգավորումների նկատմամբ՝ որպես գործնականում կիրառվող և ուղղորդող գործիքներ:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Հաջողության չափանիշ՝ ՈԱԱԿ-ի գործընթացները ճանաչվում են շահակիցների կողմից՝ որպես միջազգային լավագույն փորձի տարածման աղբյուր: ՈԱԱԿ-ը 2021-2022 թթ. հաջողությամբ պահպանել է Որակի ապահովման եվրոպական ասոցացիայի անդամակցությունը և Եվրոպական ռեգիստրում ընդգրկվածությունը:

Փաստեր

ՈԱԱԿ-ը շարունակում է իր ակտիվ ներգրավվածությունը միջազգային մասնագիտական ցանցերում և համագործակցային հարթակներում՝ նպաստելով կրթության որակի ապահովման ոլորտում միջազգային լավագույն փորձի տարածմանը և համակարգի համադրելիության բարձրացմանը՝ ապահովելով շնորհվող որակավորումների միջազգային ճանաչումը:

Միջազգային ցանցերին և կառույցներին անդամակցություն

- **Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA)**
- **Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR)**
- **Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին (INQAAHE)**
- **Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցին (CEENQA)**
- **Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական շտեմարանում (DEQAR)**
- **Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF)**
- **Ակադեմիական ազնվության համաշխարհային ցանցին (GAIN)**

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Միջազգային ցանցերին և կառույցներին անդամակցություն

ՈԱԱԿ-ը հանդիսանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի **(ENQA)** լիիրավ անդամ և գրանցված է Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում **(EQAR):**

ՈԱԱԿ-ն անդամակցում է նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին **(INQAAHE**) և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցին **(CEENQA):**

ՈԱԱԿ-ի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած բուհերի փորձագիտական զեկույցները հասանելի են Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական շտեմարանում **(DEQAR),** ինչը նպաստում է գործընթացների թափանցիկությանը և միջազգային ճանաչմանը:

ՈԱԱԿ-ը համագործակցում է Եվրոպական կրթական հիմնադրամի **(ETF)** հետ՝ մասնակցելով ՄԿՈՒ ոլորտում կրթության և որակի ապահովման համակարգերի զարգացմանն ուղղված միջազգային նախաձեռնություններին և փորձի փոխանակման հարթակներին:

2025 թվականին ՈԱԱԿ-ը անդամակցել է Ակադեմիական ազնվության համաշխարհային ցանցին **(GAIN),** ինչը հնարավորություն է տալիս ակտիվորեն մասնակցել ակադեմիական ազնվության խթանմանը և այս ոլորտում միջազգային փորձի փոխանակմանը:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Միջազգային համագործակցության ընդլայնում և համատեղ կրկնակի հավատարմագրումների իրականացում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է ընդլայնել միջազգային համագործակցությունը: Այս համատեքստում ՈԱԱԿ ղեկավար կազմի ներկայացուցիչները մասնակցել են **Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) գլխավոր վեհաժողովին** (Բրյուսել), որի ընթացքում քննարկվել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի առաջնահերթությունները, ESG չափանիշների կիրառման ընթացիկ զարգացումները և որակի ապահովման համակարգերի կատարելագործման ուղղությունները: Վեհաժողովի շրջանակում ՈԱԱԿ-ի կողմից ներկայացվել են նաև ոլորտում արհեստական բանականության կիրառման մոտեցումները՝ նպաստելով միջազգային մասնագիտական երկխոսությանը:

2025թ-ին **ENQA փորձագետների միջանկյալ այցի շրջանակում** ՈԱԱԿ-ում կազմակերպվել է ՀՀ կրթական բարեփոխումների օրակարգին համահունչ առանցքային գործիքների քննարկմանը նվիրված փորձի փոխանակման հանդիպում բուհերի ղեկավար կազմի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման թեմատիկ ուղղությունները սահմանվել են ՈԱԱԿ-ի կողմից՝ հիմնվելով համակարգի զարգացման առաջնահերթությունների վրա՝ ներառելով նախահավատարմագրման ներդրումը, կրթական ծրագրերի ներքին աուդիտի գործնական կիրառումը և բժշկական կրթության հավատարմագրման առանձնահատկությունները:



Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Միջազգային համագործակցության ընդլայնում և համատեղ կրկնակի հավատարմագրումների իրականացում

Միաժամանակ, ՈԱԱԿ-ը ներգրավվել է **Բրիտանական խորհրդի** կողմից կազմակերպված աշխատաժողովներում և քննարկումներում, որտեղ անդրադարձ է կատարվել բարձրագույն կրթության միջազգայնացմանը, որակի ապահովման քաղաքականություններին և տրանսազգային կրթության (TNE) զարգացմանը՝ ապահովելով միջազգային օրակարգի ինտեգրումն ազգային գործընթացներում:

Միջազգային համագործակցության կարևոր արդյունքներից է համատեղ և կրկնակի հավատարմագրման գործընթացների զարգացումը: Գերմանական **AQAS** գործակալության հետ համագործակցությամբ մեկնարկել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի **համատեղ կրկնակի (ինստիտուցիոնալ + 3 կրթական ծրագրերի հավատարմագրում) հավատարմագրման գործընթացը**, որի շրջանակում.

- իրականացվել է համատեղ արտաքին գնահատում՝ տեղացի և միջազգային փորձագետների ներգրավմամբ,
- ապահովվել է ազգային և միջազգային չափանիշների համադրում՝ ESG-ի հիման վրա,
- կազմվել է միասնական փորձագիտական զեկույց՝ բարելավմանն ուղղված խորհրդատվություններով:

Իրականացված համագործակցությունները նպաստել են միջազգային փորձի համակարգային փոխանցմանը, դրա տեղայնացմանը և որակի ապահովման գործընթացների արդիականացմանը՝ ամրապնդելով ՈԱԱԿ-ի դիրքը որպես միջազգային լավագույն փորձի տարածման ազգային հարթակ:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Բոլոնիայի թեմատիկ խմբերի աշխատանքներին մասնակցություն

2025 թվականին ՈԱԱԿ-ի երկու ներկայացուցիչներ շարունակել են իրենց ակտիվ ներգրավվածությունը Բոլոնիայի գործընթացի թեմատիկ **A** (որակավորումների շրջանակ) և **C** (որակի ապահովում) խմբերի աշխատանքներում:

2025-2027թթ. Հայաստանը համանախագահում է Բոլոնիայի գործընթացի որակի ապահովման թեմատիկ C խումբը՝ Ֆրանսիայի և Ռումինիայի հետ համատեղ:

Այս շրջանակում ՈԱԱԿ-ը մասնակցել է թեմատիկ խմբի աշխատանքներին և քննարկումներին՝ նվիրված.

- ESG-ի վերանայման և կիրառման զարգացմանը,
- միջսահմանային որակի ապահովմանը,
- տրանսազգային կրթության (TNE) որակի ապահովմանը,
- համատեղ կրթական ծրագրերի որակի ապահովման եվրոպական մոտեցումների մշակմանը,
- եվրոպական համալսարանների դաշինքների որակի ապահովմանը:

2025 թվականին մեկնարկել է **SIQA** նախագիծը, որը միտված է Բոլոնիայի գործընթացի որակի ապահովման թեմատիկ C խմբի (TPG C) գործունեության աջակցմանը: ՈԱԱԿ-ը նախագծում ներգրավված է որպես գործընկեր՝ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ՝ ապահովելով Հայաստանի մասնակցությունը եվրոպական որակի ապահովման քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

ՄԿՈՒ ոլորտում միջազգային համագործակցություն

Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) հետ համագործակցություն

ՈԱԱԿ-ը Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) հետ ռազմավարական համագործակցության շրջանակում 2025 թվականին իրականացրել է համակարգային նշանակության նախաձեռնություններ՝ ուղղված ՄԿՈՒ համակարգի վերափոխմանը, կարողությունների զարգացմանը և ապացուցահեն քաղաքականությունների ձևավորմանը:

Համագործակցության առանցքային ուղղություններից մեկը եղել է գործընկերային գնահատմանը մասնակցությունը Հյուսիսային Մակեդոնիայում (Սկոպյե), որի շրջանակում ուսումնասիրվել է աշխատանքի վրա հիմնված ուսուցման (work-based learning) արդյունավետությունը:

ETF-ի հետ համագործակցության շրջանակում ՈԱԱԿ-ը նախաձեռնել և իրականացրել է ՄԿՈՒ համակարգի համապարփակ ախտորոշիչ գնահատում՝ դառնալով առաջին երկրներից մեկը, որը կիրառել է ETF-ի նորարարական ախտորոշիչ գործիքը:

Գործընթացը կազմակերպվել է բազմաշահակից ձևաչափով՝ ներգրավելով շուրջ 40 ներկայացուցիչ տարբեր նախարարություններից, գործատուներից, ՄԿՈՒ հաստատություններից, ոլորտային կազմակերպություններից և փորձագիտական համայնքից:

Այս մոտեցումն ապահովել է համակարգի համակողմանի և հավաստի վերլուծություն՝ բացահայտելով կառավարման, օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը, ինչպես նաև արձանագրելով առկա հաջող փորձը:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

ՄԿՈՒ ոլորտում միջազգային համագործակցություն

ETF-ի հետ համագործակցությամբ ՈԱԱԿ-ը նաև նախաձեռնել է թեմատիկ համաժողով՝ նվիրված շրջանավարտների հետագծի ուսումնասիրման մեխանիզմներին: Ներկայացվել են եվրոպական առաջատար փորձերը, կիրառվող գործիքները և քննարկվել դրանց տեղայնացման հնարավորությունները ՀՀ ՄԿՈՒ համակարգում: Համաժողովին մասնակցել են ավելի քան 60 ներկայացուցիչ՝ 30 ՄԿՈՒ հաստատություններից, ինչպես նաև ԿԳՄՍՆ և ՄԿՈՒԶԱԿ-ի ներկայացուցիչներ, ապահովելով ոլորտային լայն ներգրավվածություն:

Հաշվետու տարում իրականացված նախաձեռնությունները ունեցել են հստակ համակարգային ազդեցություն՝

- ամրապնդվել են ՄԿՈՒ համակարգի վերլուծական և տվյալահեն կառավարման կարողությունները,
- ձևավորվել են բազմաշահակից համագործակցության կայուն հարթակներ,
- ստեղծվել են ապացուցահեն քաղաքականությունների մշակման գործիքներ և հիմքեր,
- բարձրացել է Հայաստանի տեսանելիությունը միջազգային ՄԿՈՒ հարթակներում որպես ակտիվ և ներդրումային գործընկեր:

ՈԱԱԿ-ը շարունակելու է իր ռազմավարական ուղղվածությունը ՄԿՈՒ ոլորտում՝ խորացնելով միջազգային համագործակցությունը, ներդնելով նորարարական գործիքներ և ապահովելով համակարգի շարունակական զարգացում և մրցունակություն:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցություն փորձի փոխանակման նպատակով

T-GREEN (Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի). ՈԱԱԿ ներկայացուցիչները մասնակցել են համատեղ և կրկնակի մագիստրոսական կրթական ծրագրերի մշակմանը նվիրված միջազգային աշխատաժողովների, որոնց ընթացքում քննարկվել են արդյունահենք կրթության սկզբունքների ներդաշնակեցումը, կրթական ծրագրերի կայունության ապահովումը և նորարարական մոդուլների մշակման մոտեցումները:

Micro-GEAR (Միկրոորակավորումներ Հայաստանի և Վրաստանի բարձրագույն կրթական համակարգի համար). ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ը ներգրավված է միկրոորակավորումների համակարգի ներդրման և զարգացման գործընթացներում՝ նպաստելով բարձրագույն կրթության ճկունության բարձրացմանը և շարունակական կրթության հնարավորությունների ընդլայնմանը:

KPI4HE (Հայաստանում ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի ստեղծումը). ՈԱԱԿ-ն ունի առանցքային դեր՝ համակարգելով երրորդ աշխատանքային փաթեթը, որը միտված է բարձրագույն կրթության համակարգում տվյալահենք կառավարման և որակի գնահատման մեխանիզմների ներդրմանը:

DeSIRe (Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ փափուկ հմտությունների զարգացում). ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ը ներգրավված է բարձրագույն կրթության բովանդակության արդիականացման գործընթացներում՝ նպաստելով ուսանողների փոխանցելի (փափուկ) հմտությունների համակարգային զարգացմանը և դրանց որակի ապահովման մեխանիզմների ձևավորմանը:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցություն փորձի փոխանակման նպատակով

eCAMPUS (Սոցիալական հեռավորություն և ներառական կամպուսային կրթության խթանումը Հայաստանի բուհերում). ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ը ներգրավված է թվային ուսուցման որակի ապահովման մեխանիզմների զարգացման գործընթացում՝ իրականացնելով համակարգային վերլուծական և համադրական աշխատանքներ:

QA4VET (Փորձնական հավատարմագրման իրականացում՝ աջակցելու որակի ապահովմանը Հայաստանի ՄԿՈՒ հաստատություններում). ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ը նպաստում է մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում որակի ապահովման համակարգի զարգացմանը՝ ձևավորելով փորձնական հավատարմագրման մեթոդաբանություն և գործիքակազմ, ինչպես նաև զարգացնելով հաստատությունների ինքնավերլուծության իրականացման ներքին կարողությունները: Այս նպատակով ՈԱԱԿ-ի համակարգմամբ իրականացվել է շահակից քոլեջների կարիքների գնահատում, որի հիման վրա մշակվել են վերապատրաստումների բովանդակությունն ու մեթոդաբանական մոտեցումները:

SIQA (Որակի ապահովման հիմնական հանձնառության զարգացմանն ուղղված իրագործման աջակցություն). ծրագրի նպատակն է ամրապնդել Բոլոնիայի գործընթացի առանցքային հանձնառություններից մեկը՝ որակի ապահովման համաեվրոպական մշակույթի զարգացումը: Ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ը ներգրավված է ESG-ին համահունչ որակի ապահովման գործընթացների զարգացմանն աջակցող աշխատանքներում՝ գործընկեր երկրներում ինքնագնահատման, տվյալների հավաքագրման, վերլուծության և թիրախային բարեփոխումների ծրագրերի մշակմանն ուղղված նախաձեռնություններում:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Ձեռքբերումներ

2025 թ-ի արդյունքների և **«Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում» ռազմավարական նպատակի** իրականացման ամփոփումը ցույց է տալիս հետևյալ հիմնական ձեռքբերումները.

- ամրապնդվել է ՈԱԱԿ-ի դիրքը միջազգային որակի ապահովման համայնքում՝ որպես վստահելի գործընկեր՝ ENQA և EQAR շրջանակներում գործունեության շարունակականությամբ և միջազգային մասնագիտական հարթակներում ակտիվ ներգրավվածությամբ,

- ապահովվել է միջազգային լավագույն փորձի նպատակային փոխանցում և տեղայնացում՝ կիրառելով այն ազգային մակարդակում մշակվող մեխանիզմներում (նախահավատարմագրում, ներքին աուդիտ, տվյալահենք կառավարում),

- զարգացվել են համատեղ և կրկնակի հավատարմագրման գործընթացները՝ ապահովելով միջազգային չափանիշների կիրառումը և բարձրացնելով կրթական ծրագրերի և որակավորումների ճանաչելիությունը,

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Ձեռքբերումներ

- ընդլայնվել է ՈԱԱԿ-ի դերակատարությունը Բոլոնիայի գործընթացում՝ թեմատիկ խմբերի աշխատանքներին ակտիվ մասնակցության և համանախագահության միջոցով՝ ներգրավվելով եվրոպական որակի ապահովման օրակարգի ձևավորման մեջ,

- Erasmus+ ծրագրերի շրջանակում մշակվել և փորձարկվել են նորարարական մոտեցումներ՝ միկրոորակավորումների, տվյալահենք կառավարման, թվային կրթության որակի ապահովման և փափուկ հմտությունների ինտեգրման ուղղություններով,

- ՄԿՈՒ ոլորտում իրականացվել են միջազգային համադրական վերլուծություններ և փորձարկումներ՝ ձևավորելով բարելավման կոնկրետ ուղղություններ ազգային համակարգի համար,

- ընդլայնվել են միջազգային փորձի փոխանցման և մասնագիտական երկխոսության հարթակները, որոնց միջոցով ապահովվել է նոր գործիքների, մեթոդների և քաղաքականությունների կիրառումը ՀՀ կրթական համակարգում:

Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

Հաջողության չափանիշ՝ ՈԱԱԿ-ի աշխատակազմի բոլոր ներկայացուցիչները կիսելու են ՈԱԱԿ-ի ապագայի նկատմամբ ընդհանուր տեսլականը: ՈԱԱԿ-ը կդառնա գրավիչ գործատու՝ ներգրավելով կրթության ոլորտի լավագույն փորձագետներին իր տարբեր նախագծերում՝ ապահովելով ճկուն կառավարման քաղաքականություն:

Փաստեր

Աշխատակազմի մասնագիտական կարողությունների զարգացում և միջազգային ներգրավվածություն

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ ղեկավար կազմի ներկայացուցիչները մասնակցել են ENQA գլխավոր վեհաժողովին և մասնակիցների ժողովին, որոնց շրջանակում քննարկվել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի առաջնահերթությունները, ESG չափանիշների փոփոխությունները:

ՈԱԱԿ տնօրենը մասնակցել է INQAAHE-ի 18-րդ համաժողովին, որի ընթացքում քննարկվել են որակի ապահովման համակարգերի վերափոխման միտումները, ԱԲ գործիքների կիրառումը կրթության և որակի ապահովման գործընթացներում:

ՈԱԱԿ աշխատակազմի բոլոր մասնագետները, ըստ իրենց ոլորտային ուղղվածության, մասնակցել են ENQA-ի, INQAAHE-ի, CEENQA-ի, ETF-ի և GAIN-ի կողմից կազմակերպված աշխատաժողովներին և վեբինարներին՝ ապահովելով միջազգային փորձի շարունակական ներմուծում և մասնագիտական հմտությունների արդիականացում:

Կարողությունների շարունակական զարգացման նպատակով ՈԱԱԿ 12 աշխատակից Erasmus+ ծրագրերի շրջանակում մասնակցել է միջազգային վերապատրաստումների:

Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

Մասնագիտական երկխոսություն և ներքին կարողությունների զարգացում

2025թ-ին իրականացվել են մասնագիտական քննարկումներ հավատարմագրման գործընթացների առանձնահատկությունների, կրթական ծրագրերի որակի ապահովման և ԳԱՑ-երի ներդրման ուղղություններով՝ ներգրավելով բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատությունների փորձառու ներկայացուցիչներին, ինչպես նաև փորձագետներին և համակարգողներին:

Փորձագետների հետ իրականացվել են քննարկումներ՝ նվիրված կրթական ծրագրերի վերջնարդյունահենք իրականացմանը, հետազոտական բաղադրիչի զարգացմանը և աշխատաշուկայի պահանջներին համահունչ շրջանավարտների պատրաստմանը,

Համակարգողների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են նպատակային աշխատաժողովներ, սկսվել է կիրառվել պարբերական օպերատիվ հանդիպումների (stand-up meetings) ձևաչափը:

Յուրաքանչյուր փորձագիտական այցից հետո իրականացվել են փորձի փոխանակման հանդիպումներ և հետադարձ կապի քննարկումներ:

Հաշվետու տարվա ընթացքում Հավատարմագրման հանձնաժողովի անդամները և փորձագետները մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված աշխատաժողովներին և վեբինարներին:

Միաժամանակ, ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ նրանք ներգրավվել են հաստատությունների կարողությունների զարգացման միջոցառումներում նաև որպես դասընթացավարներ:

Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

Ձեռքբերումներ

2025 թ-ի արդյունքների և «ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները» ռազմավարական նպատակի իրականացման ամփոփումը ցույց է տալիս հետևյալ ձեռքբերումները.

- ներդրվել են աշխատակազմի մասնագիտական զարգացման համակարգված մոտեցումներ՝ միջազգային համաժողովներին, աշխատաժողովներին և վերապատրաստումներին մասնակցության միջոցով՝ ապահովելով նոր փորձի ներմուծում և կիրառություն,
- ձևավորվել են գիտելիքի փոխանակման մեխանիզմներ, որոնց միջոցով միջազգային և տեղական փորձը փոխանցվում է կազմակերպության ներսում և կիրառվում տարբեր գործընթացներում,
- զարգացել են համակարգողների կարողությունները՝ պարբերական աշխատանքային հանդիպումների, փորձի փոխանակման և հետադարձ կապի կիրառման միջոցով՝ ապահովելով գործընթացների ավելի արդյունավետ կազմակերպում,

Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

Ձեռքբերումներ

2025 թ-ի արդյունքների և «ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները» ռազմավարական նպատակի իրականացման ամփոփումը ցույց է տալիս հետևյալ ձեռքբերումները.

- ընդլայնվել է փորձագետների և Հավատարմագրման հանձնաժողովի անդամների ներգրավվածությունը կարողությունների զարգացման գործընթացներում՝ որպես գիտելիք փոխանցողներ, ինչը նպաստում է փորձի համակարգային կուտակմանը և տարածմանը,
- ձևավորվել է համագործակցային մասնագիտական միջավայր, որն ապահովում է փորձագետների և մասնագետների շարունակական ներգրավվածությունը և մասնակցությունը կազմակերպության գործունեությանը:

Զարգացման մարտահրավերներ և առաջիկա ուղղություններ

ՈԱԱԿ-ի գործունեության զարգացման հաջորդ փուլը պայմանավորված է ինչպես կրթական ազգային համակարգում ընթացող բարեփոխումներով, այնպես էլ նոր իրավակարգավորումների շրջանակում ձևավորվող ինստիտուցիոնալ փոփոխություններով: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ սահմանվում է որակի ապահովման համակարգի նոր փուլ, որը միաժամանակ ստեղծում է զարգացման հնարավորություններ և առաջադրում համակարգային մարտահրավերներ:

Գործող նոր օրենքով նախատեսվող Բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման մասնագիտացված կառույցի ձևավորումն էապես ընդլայնում է որակի ապահովման համակարգի գործառույթների շրջանակը՝ ներառելով լիցենզավորման և հավատարմագրման գործընթացները, հավատարմագրման և որակավորումներին ներկայացվող պահանջների կատարման ընթացիկ մշտադիտարկումը, օտարերկրյա որակավորումների ճանաչումը և այլն:

Այս համատեքստում առաջանում է գործող իրավակարգավորումների վերանայման և նոր կարգավորումների մշակման անհրաժեշտություն՝ ապահովելու համակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը:

Նշված գործընթացի շրջանակում ՈԱԱԿ-ը նախաձեռնել է միջազգային փորձի ուսումնասիրման աշխատանքներ՝ նպատակ ունենալով վեր հանել լավագույն պրակտիկաները՝ աջակցելու ՀՀ բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգի արդյունավետ վերափոխմանը և ապահովելու ձևավորվող համակարգի համադրելիությունը եվրոպական և միջազգային մոտեցումների հետ:

Զարգացման մարտահրավերներ և առաջիկա ուղղություններ

Այս համատեքստում բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի առաջիկա զարգացման հիմնական ուղղություններն ու մարտահրավերներն են.

- նոր գործառույթների արդյունավետ իրականացում և ինստիտուցիոնալ վերափոխում՝ ապահովելով որակի ապահովման, լիցենզավորման, հավատարմագրման և որակավորումների ճանաչման գործառույթների համադրումը մեկ համակարգում,

- իրավակարգավորումների և մեթոդաբանական հիմքերի ամբողջականացում՝ համապատասխանեցնելով ներքին ընթացակարգերը նոր օրենքի պահանջներին և ապահովելով դրանց կիրառելիությունն ու հստակությունը,

- մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում՝ ընդլայնված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ փորձագիտական ներուժի ձևավորում, շարունակական վերապատրաստումների և գիտելիքի փոխանցման մեխանիզմների զարգացում,



Զարգացման մարտահրավերներ և առաջիկա ուղղություններ

Այս համատեքստում բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի առաջիկա զարգացման հիմնական ուղղություններն ու մարտահրավերներն են.

- միջազգային համադրելիության և ճանաչելիության պահպանում և զարգացում՝ շարունակելով համապատասխանությունը ESG չափանիշներին և ակտիվ ներգրավվածությունը եվրոպական և միջազգային որակի ապահովման հարթակներում,

- բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի համադրված զարգացում՝ ապահովելով միասնական մոտեցումներ և ոլորտային առանձնահատկությունների հաշվառում,

- շահակիցների հետ հաղորդակցության և ներգրավվածության խորացում՝ ձևավորելով վստահելի և մասնակցային որակի ապահովման միջավայր,

- որակի մշակույթի շարունակական զարգացում՝ ուսումնական հաստատություններում խթանելով ինքնավերլուծության, տվյալահենք որոշումների կայացման և շարունակական բարելավման մոտեցումները:



«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



Երևան 2026